ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՐՑԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՎԻԼԱՅԵԹՆԵՐՈՒՄ (1960—70-ական թվականներ)

ՍԱՄՎԵԼ ԴԵՂԱՄՅԱՆ

Թուրքիայի արևելյան վիլայեթների մասին ամբողջությամբ վերցրած առանձին մենագրություններ չեն գրվել։ Ուշագրավ են Դ. Զավրիևի, Ն. Կոմախիձեի, Հ. Գալուստյանի աշխատությունները[1], որոնցում այս կամ այն չափով քննվել է արևելյան վիլայեթների տնտեսական վիճակը և ագրարային հարցը։

Փորձենք վերջին տասնամյակում լույս տեսած թուրքագիտական գրականության, ինչպես նաև մամուլի և այլ նյութերի հիման վրա համառոտակի լուսաբանել Թուրքիայի արևելյան վիլայեթներում ագրարային հարաբերությունների զարգացման մի շարք հարցեր։

Գյուղատնտեսությունը միշտ եղել և մնում է Թուրքիայի տնտեսության հիմնական ճյուղը։ 1960 թ. այնտեղ զբաղված էր երկրի աշխատունակ բնակչության 74,9[2], 1975 թ.՝ 64,4, 1980 թ.՝ 61,5%-ը[3]։ Այս ճյուղը կարևոր է նախ նրանով, որ ընդգրկում է մարդկային ռեսուրսների մեծ մասը և միաժամանակ բնակչության մեծամասնության գոյության հիմնական աղբյուրն է։ Բացի այդ, գյուղատնտեսական արտադրանքի բաժինը միշտ բարձր է եղել երկրի արտահանման մեջ և որոշ տարիներ հասել է նույնիսկ 80%-ի[4]։ Այնուամենայնիվ, գյուղատնտեսությունը մնում է Թուրքիայի տնտեսության հետամնաց ճյուղը։

Թուրքիայում երկար տարիների ընթացքում տեղի էր ունենում գյուղացիության հողազրկման պրոցես, որն ավելի ուժեղացավ երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին և հետո։ Դրան զուգահեռ հողը կենտրոնանում էր կալվածատերերի և վաշխառուների ձեռքում։ Այսպես, օրինակ, 1960-ական թվականներին 506 գյոնումից[5] ավել հողակտոր ունեցող կալվածատիրական ընտանիքները, որոնք Թուրքիայի հողատերերի 1,5%-ն էին, իրենց ձեռքում էին պահում երկրի ամբողջ մշակելի հողերի մեկ քառորդը[6]։

Գյուղացիության սակավահողությունը և հողը կալվածատերերի ձեռքում կենտրոնացված լինելն ավելի ցայտուն էր արտահայտվում Թուրքիայի արևելյան վիլայեթներում[7]։ Ըստ թուրքական վիճակագրական տվյալների, 1965 թ. արևելյան վիլայեթների տարածքի կազմում էր 220775 քառ. կմ, որը Թուրքիայի ընդհանուր տարածքի 29,9%-ն էր, իսկ վիլայեթներում ապրող

[1] Д. С. Заврие в, К новейшей истории северо-восточных вилайетов Турции, Тбилиси, 1947; Н. В. Комахидзе, Состояние производительных сил в сельском хозяйстве Восточной Турции («Турция. История, экономика, политика», М., 1984). Հ. Հ. Գալուստյան, Թուրքիայի արևելյան վիլայեթների դեմոգրաֆիայի և տնտեսության մի քանի հարցեր (առաջին համաշխարհային պատերազմից հետո), («Մերձավոր և Միջին արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. 10, Թուրքիա, Երևան, 1979)։

[2] "Istatistik yilligi, 1960—62", Ankara, 1964, s. 81.

[3] „Türkiye Istatistik yilligi", 1981, Ankara, 1981, s. 32.

[4] „Türkiyede topiumsal ve ekonomik gelişmenin 50 yili", Ankara, 1981, s. 32.

[5] 1 հեկտարը հավասար է 10 դյոնումի։

[6] Ş. S. Aydemir, Ikinci adam, c. 2, Istanbul, 1975, s. 344.

[7] Այդ վիլայեթներն են՝ Աղրյամանը, Աղրին, Բինգյոլը, Բիթլիսը, Դիարբեքիրը (Տիգրանակերտ), Էլյազիզը, Երզինջանը (Երզնկա), Երզրումը (Կարին), Գազիանթեփը, Հաքյարին, Կարսը, Մալաթիան, Մարդինը, Մուշը, Սիիրտը (Սղերդ), Ուրֆան և Վանը (I. Beşikçi, Dogu Anadogunun düzeni, Ankara, 1969, s. 23).

5903 հա.զարի հասնող բնակչությունը Թուրքիայի բնակչության 18,8%-ն էր կազմում։ Թուրքական վիճակագրական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ 1960-ական թվականների կեսերին արևելյան վիլայեթների բնակչության 72,8%-ը գյուղական բնակչությունն էր, իսկ 27,2%-ը՝ քաղաքային, այնինչ՝ Թուրքիայում գյուղական բնակչությունը կազմում էր 65,5, իսկ քաղաքայինը՝ 34,5%[8]։ Միաժամանակ մամուլի տվյալները վկայում են, որ 1963 թ. արևելյան վիլայեթների (չհաշված Մալաթիան, Գազիանթեփը) աշխատուժի 90%-ը ընդգրկված էր գյուղատնտեսության ոլորտում[9]։ Այսինքն՝ ի տարբերություն Թուրքիայի մյուս շրջանների, այս վիլայեթներում ընդհանուր տնտեսական զարգացման մակարդակը ծայրաստիճան ցածր էր։ Հողազուրկ գյուղացիական ընտանիքների թիվը մեծ տոկոս էր կազմում Ուրֆայում (53), Դիարբեքիրում (46,8), Սիիրտում (42), Սարդինում (40,8), Էրզինշանում (38,2)[10]։

Թուրքական գյուղերում տիրող սոցիալական անհավասարության մասին է խոսում նաև այն փաստը, որ համայնքային, խառը գյուղերի կողքին կային անձնական գյուղեր[11]։ Այսպես, օրինակ, արևելյան վիլայեթներում (չհաշված Հաքյարիի վիլայեթը) 1960-ական թվականների կեսերին կար 9303 գյուղ, որից 8690-ը համայնքային էին, 228-ը պատկանում էին մեկ անձի, 213-ը՝ մեկ ընտանիքի, 173-ը՝ մեկ ցեղի, այսինքն խոշոր հողատերերի սեփականություն էր 614 գյուղ։ Ընդ որում, Ուրֆայում միայն մեկ անձի պատկանում էր 51, Գազիանթեփում՝ 38, Վանում՝ 11 գյուղ, Մարդինում մեկ ընտանիքի պատկանում էր 46, Ուրֆայում՝ 40, Թունջելիում՝ 34 գյուղ, Էրզրումում մեկ ցեղի պատկանում էր 44, Ուրֆայում՝ 32, Գազիանթեփում՝ 31 գյուղ[12]։ Ըստ Թուրք մեկ այլ հեղինակի տվյալների, Թունջելի, Աղրի, Հաթայ, Մարգին, Էրզրում, Դիարբեքիր, Սիիրտ, Ուրֆա, Գազիանթեփ վիլայեթների 5424 գյուղերի 11%-ը, այսինքն՝ 569 գյուղ մեկ անձի, ընտանիքի կամ ցեղի սեփականությունն էր[13]։ Հարկ է նշել, որ եթե այլ երկրներում նման իրավիճակը բացատրվում է միայն հողաշրջման պրոցեսի լայն թափ ընդունելով և դրան զուգահեռ կալվածատերերի ձեռքում հողերի կուտակումով, ապա Թուրքիայում դա ունի նաև զարգացման իր առանձնահատկությունը։ Բանն այն է, որ XIX դ. վերջերի և XX դ. սկզբների հայկական շարժերի, կոտորածների, տեղահանության և ցեղասպանության հետևանքով Արևմտյան Հայաստանը հայաթափ եղավ, հայաբնակ շատ շրջաններ ու գյուղեր մնացին անտեր։ Դրա հետևանքով 1920—1930-ական թվականներին Թուրքիայում տեղի ունեցավ հողի սեփականատիրական առումով մեծ տեղաշարժ՝ դարեր շարունակ հայ գյուղացու կողմից մշակվող հողերը և բարեկարգ գյուղերը կենտրոնացան քուրդ բեկերի ու շեյխերի և Թուրք աղաների ձեռքում։ Սա Թուրքիայում կալվածատերերի, խոշոր հողատերերի ձեռքում հողերի կուտակման, կենտրոնացման առանձնահատուկ ձևե-

---

[8] I. Beşikçi, նշվ. աշխ., էջ 31։

[9] „Türkiye iktisat gazetesi", 22. 8. 1963.

[10] S. Aksoy, 100 soruda Türkiyede toprak meselesi, Ankara, 1971, s. 107.

[11] Համայնքային են կոչվում այն գյուղերը, որոնց բնակիչները համարյա հավասար սեփականատիրական իրավունքներ ունեն։ Ընտանիքների միջև եղած հարաբերությունները հենվում են հարևանության վրա։ Նման գյուղերի թիվը մեծ է Արևմտյան Անատոլիայում, Թրակիայում և սևծովյան շրջաններում։ Անձնական գյուղերում հողը պատկանում է մեկ անձի, մի ընտանիքի կամ ցեղի։ Հողագործ գյուղացին նման գյուղերում հող չունի, աշխատում է վարձակալության սկզբունքով և կատարյալ կախվածության մեջ է տեղի աղայից կամ շեյխից։ Խառը կոչվում են այն գյուղերը, որտեղ հողի մեծ մասը պատկանում է մեկ կամ երկու անձի կամ ընտանիքի, իսկ հողերի մյուս մասը գյուղացիական ընտանիքների։ Այս գյուղերում նույնպես գյուղացիները կախման մեջ են աղաներից կամ շեյխերից։

[12] I. Beşikçi, նշվ. աշխ., էջ 82։

[13] D. Avcıoğlu, Türkiyenin düzeni (dün-bugün-yarın), İstanbul, 1976, s. 659.

րից էր, որը բնական ճանապարհով գյուղացիության հողազրկման հետ ոչ մի կապ չուներ։

Արևելյան վիլայեթներում ոչ բոլոր աղաներն են, որ բնակվում են իրենց գյուղերում։ Նրանց մեծ մասը քաղաքաբնակ են և ձեռք բերելով բանկային վարկեր, վաշխառուական տոկոսներով դրամ են տրամադրում գյուղացիներին, կապիտալ ներդրումներ են կատարում առևտրում, գնում են անշարժ գույք, գյուղատնտեսական մեքենաներ և այլն։ Ինչպես վկայում են փաստերը, 1960-ական թվականներին Դազիանթեփի, Ուրֆայի, Դիարբեքիրի և Մարդինի աղաները, որոնք բնակվում էին քաղաքներում, թեև գյուղացիական ընտանիքների 7,5%-ն էին կազմում, իրենց ձեռքում էին պահում այդ վիլայեթների պիտանի հողերի 70%-ը։ Դրությունը գրեթե նույնն էր նաև մյուս արևելյան վիլայեթներում՝ քաղաքներում բնակվող աղաները, որոնք շրջանի գյուղացիական ընտանիքների 4,5%-ն էին կազմում, տիրում էին տեղի հողերի 30%-ին[14]։

Ինքնին հասկանալի է, որ նման պայմաններում հողազուրկ և սակավահող գյուղացիության թիվն արևելյան վիլայեթներում բարձր տոկոս էր կազմում։ Ըստ 1965 թ. վիճակագրական տվյալների, այս շրջանների գյուղացիական ընտանիքների 38%-ը հողազուրկ էր։ Մեծ չափերի էր հասնում նաև սակավահող գյուղացիության թիվը։ Ուշագրավ է այն փաստը, որ ըստ նույն տվյալների, շրջանի սակավահող բնակչության 45%-ը ուներ 1—50 դյոնում հողամաս (տնօրինում էր շրջանի հողերի 27%-ը), 14,2%-ը ուներ 51—200 դյոնում հոզատիրություն (տնօրինում էր շրջանի հողերի 40%-ը)։ Խոշոր հողատերերի ընտանիքները, որոնք ունեին 201 դյոնումից ավելի հող, տնօրինում էին շրջանի հողերի 33%-ը և կազմում ընտանիքների 2,4%-ը[15]։

Այդ շրջանում լայնորեն տարածված է վարձակալությունը, որի առավել տարածված ձևը բնավարձակալությունն է։ Բնավարձակալությունը Թուրքիայում բաժանվում է հետևյալ տեսակների՝ յարըշըլըք, քըսըմշըլըք և մարաբաշըլըք։ Յարըշըլըքը բնավարձակալության այն տեսակն է, երբ հողատերը տալիս է միայն հողը և սերմացուն, իսկ գյուղացին օգտագործում է սեփական գույքն ու անասունը, և ստացված բերքը հավասարապես կիսում են։ Քըսըմշըլըքը բնավարձակալության այն ձևն է, երբ գյուղացին կատարած աշխատանքի դիմաց հողատիրոջից ստանում է իր բաժինը, ըստ պայմանավորված չափի։ Իսկ մարաբաշըլըքի դեպքում հողատերը տալիս է հողը, սերմացուն, գույքը, անասունը և գյուղացուց ստանում բերքի $^3/_4$-ը։

Ըստ Թուրքական մամուլի տվյալների, 1960-ական թվականներին Աղրի, Մարգին, Կարս, Թունջելի, Բինգյոլ և Վան վիլայեթներում մշակվող հողերի 59%-ը գտնվում էր բնավարձակալների տնօրինության տակ[16]։ Նույն թվականներին Ուրֆա վիլայեթի 644 գյուղերում 29,6 հազ. ընտանիք հողազուրկ էին (55%), որից 10,8 հազարը՝ բնավարձակալներ, 18 հազարը՝ գյուղատնտեսական բանվորներ, իսկ 0,7 հազարը՝ վարձակալներ էին[17]։

Ամբողջ Թուրքիայում 1950—1963 թթ. ընթացքում բնավարձակալությամբ և վարձակալությամբ զբաղվող գյուղացիական ընտանիքների թիվը 588532-ից հասել էր 730397-ի[18]։ Այլ կերպ ասած, 13 տարվա ընթացքում հողազուրկ գյուղացիական ընտանիքների թիվը Թուրքիայում ավելացել էր 141865-ով։

Արևելյան վիլայեթներում գյուղացիների հողազրկմանը նպաստում էր նաև այն հանգամանքը, որ այդ շրջաններում շատ չնչին էր գյուղատնտեսական և վարկային կոոպերատիվների թիվը, իսկ վարկերի հիմնական մասն էլ

---

[14] I. Beşikçi, նշվ. աշխ., էջ 84։
[15] Նույն տեղում, էջ 64։

[16] „Ekonomi politica". Ankara, 22, IV. 1974.
[17] Н. Г. Киреев. Развитие капитализма в Турции. К критике теории «смешанной экономики», М., 1982, с. 68.

[18] S. Aksoy, նշվ. աշխ., էջ 119.

անցնում էր խոշոր հողատերերի ձեռքը։ Այսպես, օրինակ, 1960-ական թվականների կեսերին, արևելյան վիլայեթների (չհաշված Հաքյարին) 773 հազ. գյուղացիական ընտանիքից 25,2%-ն էր գյուղատնտեսական բանկից վարկ ստացել, իսկ շրջանի 9970 գյուղից գյուղատնտեսական և վարկային կոոպերատիվ կար միայն 274-ում։ Վարկ չստացող ընտանիքները մեծ տոկոս էին կազմում Դիարբեքիրում (99,6), Մարդինում և Ուրֆայում (92), Բիթլիսում և Գազիանթեփում (91) և այլն[19]։

Գյուղացիության հողազրկման հետ միատեղ տեղի էր ունենում խոշոր հողատերերի ձեռքում մանր հողակտորների կենտրոնացում։ Դա կատարվում էր երկու ուղղությամբ՝ ֆեոդալական և կապիտալիստական։ Ֆեոդալականի ժամանակ կալվածատերերից կախյալ գյուղացին պարտքի մարման որևէ այլ միջոց չունենալով, իր հողակտորը ստիպված հանձնում է կալվածատիրոջը։ Կապիտալիստականի ժամանակ, խոշոր հողատերերը իրենց տնտեսությունները վարելով կապիտալիստական մեթոդներով, այն մեքենայացման են ենթարկում, աղատվում են վարձակալներից և մրցությանը չդիմացած, քայքայված մանր տնտեսությունների հաշվին է՛լ ավելի ընդլայնում իրենց տիրույթների չափերը։ «Կապիտալիզմի հիմնական և գլխավոր տենդենցն այն է,— նշել է Վ. Ի. Լենինը,— որ խոշոր արտադրությունը դուրս է մղում մանր արտադրությանը թե՛ արդյունաբերության և թե՛ հողագործության մեջ»։ Վ. Ի. Լենինը միաժամանակ ուշադրություն էր հրավիրում այն բանի վրա, որ այդ դուրսմղումը միանգամից տեղի չի ունենում։ «Դուրսմղմանն է վերաբերում,— գրել է նա,— նաև տարիներ ու տասնամյակներ տևելու ընդունակ քայքայումը, մանր հողագործների տնտեսական պայմանների վատթարացումը»[20]։

Արևելյան վիլայեթներում արագ չափերով ավելանում է գյուղատնտեսության մեջ օգտագործվող տրակտորների թիվը։ Եթե 1965 թ. արևելյան վիլայեթներում կար 3594 տրակտոր, 1970 թ.՝ 9376, ապա 1980 թ. այդ թիվը հասավ՝ 42346-ի։ Ըստ նույն 1981 թ. վիճակագրական տվյալների, տրակտորներով առավել հագեցած վիլայեթներն են Գազիանթեփը (15,7%), Կարսը (11%), Դիարբեքիրը (8,1%)։ Այդ թիվը ցածր տոկոս է կազմում Հաքյարիում (0,6), Բինգյոլում (0,8), Թունջելիում (1,3)[21]։ Արևելյան շրջաններում տրակտորների և գյուղատնտեսական մեքենաների կիրառման հետևանքով հարյուր հազարավոր գյուղացիական ընտանիքներ քայքայվեցին, լրացնելով հողազուրկ գյուղացիների շարքերը։ Նրանց մի մասը, ընտանիքը թողնելով գյուղում, մեկնում էր քաղաք աշխատանք փնտրելու։ Ըստ Թուրքական մամուլի տվյալների, 1972—1976 թթ. երկրի արևելյան և Կենտրոնական Անատոլիայի շրջաններից ավելի քան 3,2 մլն մարդ տեղափոխվել է Թուրքիայի հարավ-արևմտյան արդյունաբերական շրջանները։ Նրանց մոտ 50%-ը հաստատվել է Անկարայում, Ստամբուլում և Իզմիրում[22]։ Միաժամանակ հարկ է նշել, որ այդ մեքենայացումը սպասվող արդյունքը չէր կարող տալ։ Բանն այն է, որ այդ գյուղատնտեսական մեքենաները զուրկ էին պահեստամասերից, օգտագործվող մեքենաները ախտասահմանյան տարբեր տեսակների էին, որը դժվարացնում էր նրանց սպասարկումը և վերանորոգումը։ Բացի այդ, սպասարկող անձնակազմն էլ զուրկ էր համապատասխան տեխնիկական գիտելիքներից։ Գյուղատնտեսության արդիացմանը և տեխնիկական հագեցվածությանը խոչընդոտում էր նաև հողազուրկների հսկա բանակի առկայությունը, հողակտորների կտրտվածությունը։ Անգամ խոշոր հողատերերի հողերը շատ հաճախ բաժանված էին բազմաթիվ հողակտորների, որը բացառում էր մեքենա-

---

[19] I. Beşikçi, Նշվ. աշխ., էջ 113։

[20] Վ. Ի. Լենին, Երկ, հ. 27, էջ 234։

[21] „Tarım istatistik özeti 1981", Ankara, 1982, s. 22, „Tarım istatistik özeti 1970", Ankara, 1971, s. 22, 25.

[22] „Vatan", 28. VIII. 1977.

ների շահութաբեր օգտագործումը։ Այդ էր պատճառը, որ արևելյան վիլայեթների զգալի մասում հողը մշակվում էր ձեռքի հասարակ գործիքների միջոցով։ Եվ պատահական չէր, որ արևելյան վիլայեթներում 1960-ական թվականների կեսերին արտադրվող գյուղատնտեսական արտադրանքի արժեքը կազմում էր ամբողջ Թուրքիայի գյուղատնտեսական արտադրանքի արժեքի ընդամենը 10,7%-ը[23]։

Այսպիսով, Թուրքիայի արևելյան վիլայեթներում մի կողմից արագ թափով տեղի է ունենում գյուղացիների հողազրկում, իսկ մյուս կողմից՝ այդ հողերի կուտակումը խոշոր հողատերերի ձեռքում։ Ագրարային վերափոխումներ անցկացնելու նպատակով Թուրքիայի կառավարող շրջանների ձեռնարկած մի շարք միջոցառումները ո՛չ Թուրքիայում և ո՛չ էլ հատկապես նրա արևելյան վիլայեթներում ցանկալի արդյունք չտվեցին։ Պատճառն այն էր, որ ազգային բուրժուազիան, կապված լինելով հողատիրության և կալվածատիրական դասակարգի հետ, չէր ձգտում այնպիսի լուրջ բարեփոխումների, որոնք կսահմանափակեին խոշոր հողատերերի շահերը։

АГРАРНЫЙ ВОПРОС В ВОСТОЧНЫХ ВИЛАЙЕТАХ ТУРЦИИ (1960—70-ые годы)

САМВЕЛ ГЕГАМЯН

Резюме

Турецкая деревня в восточных вилайетах страны находится в критическом состоянии. Быстрыми темпами идет процесс обезземеливания крестьянских масс и концентрация этих земель в руках ага и шейхов. Если подобная ситуация в других странах объясняется только расширением масштабов процесса обезземеливания и параллельно с этим концентрации земель в руках земледельцев, то в Турции она к тому же имеет особенность своего развития. Дело в том, что в конце XIX—начале XX вв. в результате геноцида и переселения армян Западная Армения лишилась армянского населения и многие армянские районы оказались заброшенными. Вследствие этого в 1920—30 гг. в Турции произошла большая перемена в области землевладения—обрабатываемые испокон веков крестьянином-армянином земли и благоустроенные деревни сконцентрировались в руках курдских беков и шейхов, а также турецких ага.

---

[23] I. Besikçi, Նշվ. աշխ., էջ 64։